

Պրոլետարիատը բոլոր յերկիրաների, միացե՛ք

ԽՈՐՀՂԱՅԻՆ
ԱՌԵԱԼԻՍԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԻԾԸ,
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԳԿ-Ի
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՉԱՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ՅԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԳԿ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

342

Խ-11

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՑ - 1936

05 FEB 2010
01 MAR 2010

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾՎԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՑԻ
ՆԱԽԱԳԱԴՅՈՒԹՅԱՆ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1009
39970

4012

Լսելով Սահմանադրական հանձնաժողովի նախագուհ ընկեր ՍՏԱԼԻՆԻ զեկուցումը ԽՍՀՄ Սահմանադրության նախագծի մասին՝ ԽՍՀ Միության Կենտրոնական նախագուհու նախագահությունը գործում է.

1. Հավանություն տայ ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծին, վոր ներկայացրել է ԽՍՀ Միության Կենտրոնական Սահմանադրական հանձնաժողովը:

2. Հրավիրել Խորհուրդների համամիութենական համագումար՝ ԽՍՀ Միության Սահմանադրության նախագիծը բնենելու համար:

3. Խորհուրդների համամիութենական համագումար հրավիրելու ժամկետ սահմանել 1936 թվականի նոյեմբերի 25-ը:

4. Հրապարակել ԽՍՀ Միության Սահմանադրության նախագիծը համաժողովրդական բնարկման համար:

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Մ. ԿԱՂԻՆԻՆ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղարի պաշտոնակատար՝ Ի. ՌԻՆՇԼԻԽԵՍ



1936 թ. ԽԱՂԻՆԻՆ 11

11 SEP 2013

34.530

342
m-11

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ,
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿՈՄԻ
ՍՍՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ԵԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿՈՄԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ

ԱՌԵՎԱԼԻՍՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

КОНСТИТУЦИЯ
(основной закон)
СОЮЗА ССР
(проект)

Армпартиздат
Эривань. 1936

Կոմիտե սրբազնիք ՅԵ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ
Սրբազնիք Լ. ԱԲՈՎՅԱՆ

Համամշակած և արտադրության 20/VI 1936 թ.
Ստորագրված և տպագրելու 22/VI 1936 թ.

Գլուխիտի լիազոր № C—1077
Հրատ. № 381
Պատվեր № 806
Տիրած 100.000
Գիմը 30 կ.

Պետհրատի տպարան
Ծերեկան

ԳԼՈՒԽ

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բանվորների ու գյուղացիների սոցիալական պետություն է:

ՀՈԴՎԱԾ 2. ԽՍՀՄ-ի քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների պատգամավորների Խորհուրդները, վորոնք աճելու ամրապնդվել են կարվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապարելու և պրոլետարիատի դիկտատորան նշանակելու հետևանքով:

ՀՈԴՎԱԾ 3. Ամբողջ իշխանությունը ԽՍՀՄ-ում պատկանում է քաղաքի ու գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների պատգամավորների Խորհուրդների:

ՀՈԴՎԱԾ 4. ԽՍՀՄ-ի տնտեսական հիմքն են կազմում տընտեսության սոցիալիստական սիստեմը և արտագրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու հետևանքով:

ՀՈԴՎԱԾ 5. Սոցիալիստական սեփականությունը ԽՍՀՄ-ում ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոոպերատով-կոլտնտեսային սեփականության ձև (առանձին կոլտնտեսությունների սեփականություն, կոոպերատիվ միավորացմների սեփականություն):

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, Փարբիկաները, հանքահողերը, Հանքերը, յերկաթուղային, Ջրային ու ողային տրանսպորտը, բանկերը, կազիմիջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհութեասությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև հիմնական բնակարանային Փոնդը քաղաքներում ու արդյունաբերական կետերում, հանդիսանում են պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլտնտեսությունների ու կոռուպերատիվ՝ կազմակերպությունների հանրային ձեռնարկություններն իրենց կենդանի ու մեռյալ ինվենտարով, կոլտնտեսությունների և կոռուպատիվ կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը, ինչպես նաև նրանց հանրային շենքերը, կազմում են կոլտնտեսությունների ու կոռուպատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն անձնական ոգտագործման համար ունի վոչ-մեծ տնամերձ հողամաս և, վորպես անձնական սեփականություն՝ ոժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անհասուն, թուչուններ և գյուղատնտեսական մասը ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնագրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անհամպետ ողատագործելու համար, այսինքն՝ առհավետ:

ՀՈԴՎԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սիստեմի կողքին, վորը հանդիսանում է անտեսության տիրապետող ձեր ԽՍՀ Միությունում, որենքով թույլատրվում է մենատնտես գյուղացիների ու տնայնագործների մանր մասնավոր անտեսություն, վորը հիմնված է անձնական աշխատանքի վրա և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը:

ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականությունը՝ նրանց աշխատանքային յեկամուտների ու խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և ոժանդակ տնային տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և գործածության ա-

ռարկանների նկատմամբ, ինչպես նաև անձնական սովառման ոչ հարմարության առարկանների նկատմամբ, պահպանվում ե որենք քայլ:

ՀՈԴՎԱԾ 11. ԽՍՀՄ-ի տնտեսական կյանքը վորոշում են նրան ուղղություն և տալիս պետական ժողովրդատնտեսական պլանը՝ հոգուած հանրային հարստության ավելացման, աշխատավորմերի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ԽՍՀՄ-ի անկախության ամրացման և նրա պաշտպանության ուժեղացման:

ՀՈԴՎԱԾ 12. ԽՍՀՄ-ում՝ աշխատանքը յուրաքանչյուր աշխատական քաղաքացու պարտականությունն ե՝ «ով չի աշխատում, նույնի ուսում» ակզբունքով:

ԽՍՀՄ-ում իրականացվում է սոցիալիզմի «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակությունների», յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի» սկզբունքը:

ՖԼՈՒԽ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔԻ

ՀՈԴՎԱԾ 13. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը գանձնակցային պետություն է, կազմված հետեւյալ իրավունքասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կամավոր միավորման հիմունքով.

Բուռաստանի Խորհրդային ֆեներատիվ Սոցիալիստական Հանրապետության:

Աւկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության:

Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության:

Ալբրեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության:

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության .

Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության .

Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության .

Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության .

Ղազախական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության .

Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության :

ՀՈԴՎԱԾ 14. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավասությանը, ի դեմս նրա իշխանության գերազույն մարմինների և պետական կառավարման մարմինների, յենթակա յեն .

ա) Միությանը միջազգային հարաբերություններում ներկայացնելը, այլ պետությունների հետ պայմանագրերի կնքելն ու նրանց ռատիֆիկացիան .

բ) պատերազմի ու խաղաղության հարցերը .

գ) ԽՍՀՄ-ի կազմի մեջ նոր հանրապետություններ ընդունելը .

դ) ԽՍՀՄ-ի Սահմանադրության կատարման վերահսկողությունը և ԽՍՀՄ-ի Սահմանադրությանը դաշնակից հանրապետությունների սահմանադրությունների համապատասխանությունն առպահչովելը .

ե) դաշնակից հանրապետությունների միջև սահմանների վերփոխությունների հաստատումը .

զ) ԽՍՀՄ-ի պաշտպանության կազմակերպումը և ԽՍՀՄ-ի պոլոր զինված ուժերի զեկավարումը .

ը) արտաքին առևտուրը՝ պետական մենաշնորհի հիմունքով .

թ) պետական անվտանգության պահպանությունը .

ժ) ԽՍՀՄ-ի ժողովրդատնտեսական պլանների սահմանումը .

ի) ԽՍՀՄ-ի միասնական պետական բյուջեյի հաստատումը .

ինչպես նաև միութենական, Հանրապետական ու տեղական բյութեներ կազմելու համար ստացվող տուրքերի և յեկամուտների հաստատումը .

լ) ընդհանուր-միութենական նշանակություն ունեցող բանակերի, արդյունաբերական ու գյուղատնտեսական հիմնարկների ու ձեռնարկությունների, ինչպես նաև առևտրական ձեռնարկությունների կառավարումը .

լա) տրանսպորտի ու կապի կառավարումը .

լի) գրամական ու վարկային սիստեմի ղեկավարումը .

լկ) գույքի պետական ապահովագրության կազմակերպումը .

լմ) գովիճառությունների կնքելն ու տալը .

լն) հողովագործման, ինչպես նաև ընդերքի, անտառների ու ջրերի ոգտագործման հիմնական սկզբունքների սահմանումը .

լ՛) Հուսավորության ու առողջապահության ասպարեզներում հիմնական սկզբունքների սահմանումը .

լ՛մ) Ժողովրդատնտեսական հաշվառման միասնական սիստեմի կազմակերպումը .

լ՛ն) աշխատանքի որենսգրության հիմունքների սահմանումը .

լ՛՛) գատարանակազմության և գատավարության որենսդրությունը . քրեական ու քաղաքացիական որենսդրությը .

լ՛՛մ) միութենական քաղաքացիության վերաբերյալ որենքները . ոտարերկացինների իրավունքների վերաբերյալ որենքները .

լ՛՛՛) ամրիստիայի ընդհանուր-միութենական ականքի հրատապմակումը :

ՀՈԴՎԱԾ 15. Դաշնակից հանրապետությունների գերիշխանությունը սահմանափակված է միմիայն ԽՍՀՄ-ի Սահմանագրության 14-րդ հոդվածում մատնանշված շրջանակներով : Այդ շրջանակներից գուրս յուրաքանչյուր Դաշնակից հանրապետություն պետական իշխանությունն իրականացնում է ինքնուրույն կերպով : ԽՍՀՄ-ի պահպանում է դաշնակից հանրապետությունների գերիշխան իրավունքները :

ՀՈԴՎԱԾ 16. Յուրաքանչյուր Դաշնակից հանրապետությունների իր Սահմանադրությունը, վորը հաշվի յետ առնում հանրապետության առանձնահատկությունները և կառուցված է ԽՍՀՄ Միության Սահմանադրությանը վեցին համապատասխան :

ՀՈԴՎԱԾ 17. Յուրաքանչյուր Դաշնակից հանրապետության
իրավունք և վերապահվում ազատ կերպով դուրս գալու ԽՍՀ
Միությունից :

ՀՈԴՎԱԾ 18. Դաշնակից հանրապետությունների տերիտո-
րիան չի կարող փոփոխել առանց նրանց համաձայնության :

ՀՈԴՎԱԾ 19. ԽՍՀՄ-ի որենքները միատեսակ ուժ ունեն բո-
լոր դաշնակից հանրապետությունների տերիտորիայում :

ՀՈԴՎԱԾ 20. Դաշնակից հանրապետության որենքի և ընդ-
հանուր-միութենական որենքի միջև տարածայնություն լինելու
գեղըում գործում և ընդհանուր-միութենական որենքը :

ՀՈԴՎԱԾ 21. ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար սահմանվում
է միասնական միութենական քաղաքացիություն :

Դաշնակից հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի
հանդիսանում է ԽՍՀՄ-ի քաղաքացի :

ՀՈԴՎԱԾ 22. Ուստաստանի Խորհրդային ֆեդերատիվ Սո-
ցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Սղով-Մեծո-
վյան, Հեռավոր-Արևելյան, Արևմտյան Սիբիրի, Կրասնյարսկի,
Հյուսիսային Կովկասի յերկրամասներից. Վորոնեժի, Արևելյան
Սիբիրի, Գորկու, Արևմտյան, Խվանովյան, Կալինինի, Կիրովի,
Կույբիչևի, Կուրսկի, Լենինգրադի, Մոսկայի, Ռոստովի, Սար-
գստի, Սարատովի, Սվերդլովսկի, Հյուսիսային, Ստալինդրա-
ցի, Զելյարինսկի, Յարոսլավլի մարզերից. Թաթարական, Բաշ-
կիրական, Դաղստանի, Բուրյաթ-Մոնղոլական, Կարարդինո-
բալկարյան, Կալմիկյան, Կարելյան, Կոմի, Ղրիմի, Մարյան,
Մորդվյայի, Մերձվոլգյան Գերմանացիների, Հյուսիսային Ռ-
ուսական, Ռուսուրայան, Զելենո-Խնդուշյան, Չուվաշյան, Յա-
կուտյան ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետու-
թյուններից. Ադրբեյջի, Հրեական, Կարաչայի, Ոյբոթյան, Խա-
կասյան, Զերկեսյան ավտոնոմ մարզերից :

ՀՈԴՎԱԾ 23. Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունը բաղկացած է Վիննիցայի, Դնեպրովետրով-
սկի, Դոնեցի, Կիևի, Ողեսայի, Խարկովի, Զելնիկովի մարզե-
րից և Մոլդավական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունից :

ՀՈԴՎԱԾ 24. Ադրբեյջանյան Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետության մեջ մտնում են՝ Նախիջևանի Ավտոնոմ Խոր-
հրդային Սոցիալիստական Հանրապետությունը և Լեռնային
Ղարաբաղի ավտոնոմ մարզը :

ՀՈԴՎԱԾ 25. Վրացական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետության մեջ մտնում են՝ Արբաղական ԱԽՍՀ, Աջա-
րական ԱԽՍՀ, Ղարավ-Ռութեական ավտոնոմ մարզը :

ՀՈԴՎԱԾ 26. Ուղարքական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետության մեջ մտնում է Կարա-Կալպակական ԱԽՍՀ :

ՀՈԴՎԱԾ 27. Տաղիկական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետության մեջ մտնում է Լեռնային Բադախշանի ավտո-
նոմ մարզը :

ՀՈԴՎԱԾ 28. Ղադախիստական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունը բաղկացած է Ակտյուրինուկի, Ալժա-Աթայի,
Արեւլյան Ղադախիստանի, Արևմտյան Ղաղախստանի, Կարազան-
դայի, Ղարավային Ղաղախստանի մարզերից :

ՀՈԴՎԱԾ 29. Հայկական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Թուրք-
մենական ԽՍՀ և Կիրդիղական ԽՍՀ իրենց կազմում ավտոնոմ
Հանրապետություններ, ինչպես նաև յերկրամասեր ու մարզեր,
չունեն :

ԳԼՈՒԽ III

ԽՈՐՀՈՒԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 30. ԽՍՀՄ-ի պետական իշխանության բարձրա-
գույն մարմինը ԽՍՀՄ-ի Գերազույն Խորհուրդն է :

ՀՈԴՎԱԾ 31. ԽՍՀՄ-ի Գերազույն Խորհուրդն իրականաց-
նում է Սահմանադրության 14-րդ Հոդվածով Խորհրդային Սո-
ցիալիստական Հանրապետությունների Միությանը վերապահված
բոլոր իրավունքները, ինչ չափով վոր նրանք ըստ Սահմանա-
գրության չեն մտնում ԽՍՀՄ-ի Գերազույն Խորհրդին հաջետու-

ԽՍՀՄ-ի մարմինների—ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության, ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 32. ԽՍՀՄ-ի որենսդրական իշխանությունն իրականացնում ե բացառապես ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդություն:

ՀՈԴՎԱԾ 33. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը բաղկացած է յերկու պալատներից—Միության Խորհրդից և Ազգությունների Խորհրդից:

ՀՈԴՎԱԾ 34. Միության Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ-ի քաղաքացիները՝ 300 հազար բնակչին մի պատգամավորի նորմայով:

ՀՈԴՎԱԾ 35. Ազգությունների Խորհուրդը կազմվում ե այն պատգամավորներից, վորոնց ընտրում են գանձակից ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդները և ավտոնոմ մարզերի աշխատավորության պատգամավորների Խորհուրդները՝ տասական պատգամավոր յուրաքանչյուր դաշնակից հանրապետությունից, հնդական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից և յերկուական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ մարզից:

ՀՈԴՎԱԾ 36. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն ընտրվում ե չորս տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 37. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատներն ել, Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդը, իրավահամասար են:

ՀՈԴՎԱԾ 38. Միության Խորհրդին և Ազգությունների Խորհրդին հավասարապես որենսդրական նախաձեռնություն ե պատկանում:

ՀՈԴՎԱԾ 39. Որենքը հաստատված ե համարվում, յեթե նա ընդունված ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատների կողմից ել՝ յուրաքանչյուրի հասարակ մեծամասնությամբ:

ՀՈԴՎԱԾ 40. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընդունած որենքները հրապարակվում են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 41. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նստաշրջաններն սկսվում ու վերշանում են միաժամանակ:

ՀՈԴՎԱԾ 42. Միության Խորհուրդն ընտրում ե Միության Խորհրդի նախագահին և նրա յերկու տեղակալներին:

ՀՈԴՎԱԾ 43. Ազգությունների Խորհուրդն ընտրում ե Ազգությունների Խորհրդի նախագահին և նրա յերկու տեղակալներին:

ՀՈԴՎԱԾ 44. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները գեկավարում են համապատասխան պալատների նխոտները և անորինում են նրանց ներքին կարգը:

ՀՈԴՎԱԾ 45. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատների միացյալ նխոտները հերթով վարում են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները:

ՀՈԴՎԱԾ 46. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանները հրավիրում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունը տարեկան յերկու անգամ:

Արտակարգ նստաշրջանները հրավիրում ե ԽՍՀՄ-ի Գերագություն Խորհրդի նախագահություններին իր հայեցղողությամբ կամ դաշնակից հանրապետություններից մեկի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 47. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միջև տարածայնություն ծագելու գեղաքում հարցը հանձնվում է լուծելու պարիստեալին հիմունքներով կազմված համաձայնեցուցիչ հանձնաժողովին: Յեթե համաձայնեցուցիչ հանձնաժողովը համերաշխ վորոշման չի հանդում կամ յեթե նրա վորոշմը չի բավարարում պալատներից մեկին, հարցը յերկրորդ անգամ քննվում է պալատներում: Յեթե պալատների համերաշխ վորոշում չկայացնելու դեպքում՝ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունն արձակում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը և նշանակում ե նոր ընտրություններ:

ՀՈԴՎԱԾ 48. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը յերկու պալատների միացյալ նխոտները ընտրում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահություն, բաղկացած ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահից, նրա չորս տեղակալներից, նախագահության քարտուղարից և նախագահության 31 անդամներից:

ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունը հաշվետու

յէ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի առաջ՝ իր ամբողջ գործունեցության հսմար:

ՀՈԴՎԱԾ 49. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախադաշությունը—

ա) հրավիրում և ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջան-ները.

բ) մեկնաբանում և գործող որենքները, հրատարակելով համալսարանին հրամանադրելով.

դ) արձակում և ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը ԽՍՀՄ-ի Սահմանադրության 47-րդ հոդվածի հիման վրա և նշանակում և նոր ընտրությունները.

դ) կազմակերպում և համաժողովրդական հարցում (ուժեղնում) իր նախաձեռնությամբ կամ դաշնակից հանրապետություններից մեկի պահանջով.

ե) բեկանում և ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհրդների վորոշումներն ու կարգադրությունները՝ որևէ քի՞ն անհամարական լինելու դեպքում.

զ) ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում պաշտոնից ազատում և նշանակում և ԽՍՀՄ-ի առանձին ժողովրդական Կոմիսարներին՝ ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախադաշի առաջադրմամբ, հետագայում ներկայացնելով ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդին ի հաստատությունը.

ը) պարզեատրում և ԽՍՀՄ-ի չքանչաններով.

թ) իրականացնում և ներման իրավունքը.

ժ) նշանակում և փոխում և ԽՍՀՄ-ի զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը.

ի) ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում պատերազմի վիճակ և հայտարարում ԽՍՀՄ-ի վրա ուղղմական հարձակում կատարվելու դեպքում.

լ) հայտարարում և ընդհանուր և մասնակի զորահավաք.

մ) ուստիֆելացիայի յե յենթարկում միջազգային պայմանադրերը.

ն) նշանակում և հետ և կանչում ԽՍՀՄ-ի լիազոր ներկայացուցիչներին ուստարելիրյա պեառություններում.

կ) ընդունում և ոտարերկրյա պետությունների գլուխանգիստական ներկայացուցիչների ակրեալի պատասխան:

ՀՈԴՎԱԾ 50. Սիության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդն ընտրում են մանդատային հանձնաժողովներ, վորոնք ստուգում են յուրաքանչյուր պալատի պատգամավորների լիազությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջադրմամբ՝ պալատները վորոնում են կամ ընդունել առանձին պատգամավորների լիազությունները, կամ բնկանել նրանց ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 51. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը, յերբ անհրաժեշտ դուրս է քննիչ ու վերստուգիչ հանձնաժողով-ներ ամեն մի հարցի առթիվ:

Բոլոր հիմնարկներն ու պաշտոնատար անձինք պարտավոր են կառապել այդ հանձնաժողովների պահանջները և ներկայացնել նրանց անհրաժեշտ նյութեր ու վիստավթղթեր:

ՀՈԴՎԱԾ 52. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորը չի կարող զատական պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել առանց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի համաձայնության, իսկ այն ժամանակաշրջանում, յերբ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջաններ չկան, — առանց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախադաշության համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 53. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա արձակվելու դեպքում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախադաշությունը պահպանում ե իր լիազորությունները միջև ԽՍՀՄ-ի նորընտիր Գերագույն Խորհրդի կողմից ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նոր նախադաշություն կազմվելը:

ՀՈԴՎԱԾ 54. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա արձակվելու դեպքում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախադաշությունը նշանակում ե նոր ընտրություններ՝ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց կամ նրա արձակվելու որից վոչ ուշ քանի յերկու ամսվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 55. ԽՍՀՄ-ի նորընտիր Գերագույն Խորհրդի հրավիրում և ԽՍՀՄ-ի նախակին կազմի Գերագույն Խորհրդի

Նախագահության կողմից՝ ամենաուշը ընտրություններից մի տարիս հետո:

ՀՈԴՎԱԾ 56. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը յերկու պալատների միացյալ նիստում կազմում ե ԽՍՀՄ-ի Կառավարություն—ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

ԳԼՈՒԽ IV

ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 57. Դաշնակից հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 58. Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհուրդը ընտրում են հանրապետության քաղաքացիները՝ չորս տարի ժամանակով:

Ներկայացուցչության նորմաները սահմանվում են դաշնակից հանրապետությունների Սահմանադրություններով:

ՀՈԴՎԱԾ 59. Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհուրդը հանրապետության միակ որենսդիր մարմինն է:

ՀՈԴՎԱԾ 60. Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհուրդը—

ա) ընդունում ե հանրապետության Սահմանադրությունը և փոփոխություններ և մացնում նրա մեջ՝ ԽՍՀՄ-ի Սահմանադրության 16-րդ հոդվածի համեմատ.

բ) հաստատում ե իր կազմի մեջ գտնվող ավտոնոմ հանրապետությունների Սահմանադրությունները և վորոշում ե նրանց տերիտորիան սահմանները.

գ) հաստատում ե հանրապետության ժողովրդատնտեսական պրանը և բյուջեն.

դ) որակում ե ամենիստիայի և Դաշնակից հանրապետության դատական մարմինների կողմից դատավարական քաղաքացիներին ներումն չնորհելու իրավունքով:

ՀՈԴՎԱԾ 61. Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում է Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահություն հետևյալ կազմով — Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ, նրա տեղակալներ և Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության անդամներ:

Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության լիազորությունները վորոշում են Դաշնակից հանրապետության Սահմանադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 62. Նիստերը վարելու համար Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհրդի լընտրում ե իր նախագահին և նրա տեղակալներին:

ՀՈԴՎԱԾ 63. Դաշնակից հանրապետության Գերագույն Խորհրդը կազմում է Դաշնակից հանրապետության Կառավարություն—Դաշնակից հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

ԳԼՈՒԽ V

ԽՈՐՀՐԴԱՅՑԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 64. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական իշխանության բարձրագույն գործադիր ու կարգադրիչ մարմինը ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 65. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդը պատասխանատու յե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան:

ՀՈԴՎԱԾ 66. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդը վորոշումներ ու կարգադրություններ ե հրատարակում՝ գործող որենքների հիման վրա և ի կատարումն այդ որենքների, և ստուգում ե նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 67. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խոր-



Հըրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարագաղիր և ԽՍՀՄ-ի ամբողջ տերիտորիայում :

ՀՈԴՎԱԾ 68. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհուրդը —

ա) միավորում և ուղղություն և տալիս ԽՍՀՄ-ի ընդհանուր միութենական ու միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատների և նրա գերատեսչությանը յենթակա տնտեսական ու կուլտուրական այլ հիմնարկների աշխատանքին .

բ) միջոցներ և ձեռք առնում ժողովրդատնտեսական պլանը, պետական բյուջեն իրականացնելու և վարկային-դրամական սիստեմն ամրացնելու համար .

գ) միջոցներ և ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու համար .

դ) իրականացնում և ընդհանուր դեկալարություն ուսաբերյալ պետությունների հետ ունեցած հարաբերությունների ասպարեզում .

ե) ահմանում և իսկական դինվորական ծառայության կոչվելու յենթակա քաղաքացիների յուրաքանչյուր տարվա կոնտինգենտները, դեկալարում և յերկրի դինված ուժերի ընդհանուր ժինարարությունը :

ՀՈԴՎԱԾ 69. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կառավարման ու տնտեսության՝ ԽՍՀՄ-ի իրավասությանը վերապահված ճյուղերում կասեցնել դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները և վերացնել ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների հրամաններն ու հրահանգները :

ՀՈԴՎԱԾ 70. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կազմվում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կարգով .

ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ .

ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ .

ԽՍՀՄ-ի Պետական Պլանային Հանձնաժողովի նախագահ .

Խորհրդային վերահսկողության Հանձնաժողովի նախագահ .

ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարներ .

Մթերուայների կոմիտեյի նախագահ .

Արվեստի գործերի կոմիտեյի նախագահ .

Բարձրադրույն դպրոցի գործերի կոմիտեյի նախագահ :

ՀՈԴՎԱԾ 71. ԽՍՀՄ-ի կառավարությունը կամ ԽՍՀՄ-ի այն ժողովրդական կոմիսարը, զորին ուղղված և ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորը հարցապնդումը, ոլարտավոր են ամենաուշը յերեք օրվա ընթացքում գրավոր կամ բանավոր ոլարտավան տալ համապատասխան պալատում :

ՀՈԴՎԱԾ 72. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարները տնորինում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք մանում են ԽՍՀՄ-ի իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 73. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարները համապատասխան ժողովրդական կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ զործող որենքների, ինչպես նաև ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ որենքների, վորոշումների ու կարգադրությունների կարգադրությունների, և սոուզում են նըանց կատարումը :

ՀՈԴՎԱԾ 74. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարիատները լինում են կամ ընդհանուր միութենական, կամ միութենական-հանրապետական :

ՀՈԴՎԱԾ 75. Ընդհանուր-միութենական ժողովրդական կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ԽՍՀՄ-ի ամբողջ տերիտորիայում անորինում են կամ անմիջականորեն, կամ իրենց կողմից նշանակված մարմինների միջոցով :

ՀՈԴՎԱԾ 76. Միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը տնորինում են դաշնակից հանրապետությունների նույնանուն ժողովրդական կոմիսարիատների միջոցով :

ՀՈԴՎԱԾ 77. Ընդհանուր-միութենական ժողովրդական կոմիսարիատների թվին են պատկանում հետեւյալ ժողովրդական կոմիսարիատները .

Պաշտպանության .

Արտաքին գործերի .
Արտաքին տռետրի .

Հաղորդակցության ճանապարհների .
Կապի .

Գրային տրանսպորտի .

Մանր արդյունաբերության :

ՀՈԴՎԱԾ 78. Միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատների թվին են պատկանում հետեւյալ ժողովրդական կոմիսարիատները .

Մնացի արդյունաբերության .

Թեթև արդյունաբերության .

Անտառային արդյունաբերության .

Հողագործության .

Հացահատիկային ու անասնաբուծական խորհանտեսությունների .

Ֆինանսների .

Ներքին առևտրի .

Ներքին գործերի .

Արդարադատության .

Առողջապահության :

ԳԼՈՒԽ VI

ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 79. Դաշնակից հանրապետության պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը Դաշնակից հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդն է :

ՀՈԴՎԱԾ 80. Դաշնակից հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը պատասխանատու յե Դաշնակից հանրապետության Գերազույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան :

ՀՈԴՎԱԾ 81. Դաշնակից հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը հրատարակում է վորոշումներ ու կարգադրություններ՝ ԽՍՀՄ-ի ու Դաշնակից հանրապետության դու-

ծող որենքների, ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումների այդ որենքների, վորոշումների ու կարգադրությունների, և սառեւում և նրանց կատարումը :

ՀՈԴՎԱԾ 82. Դաշնակից հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կասեցնելու ավանդում հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները և վերացնելու յերկրամասերի, մարզերի ու ավտոնոմ մարզերի աշխատավորների Խորհուրդների գործադիր կոմիտեները կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները :

ՀՈԴՎԱԾ 83. Դաշնակից հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կազմվում է Դաշնակից հանրապետության Գերազույն Խորհրդի կոմիտե հետեւյալ կարմով .

Դաշնակից հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ .

Նախագահի տեղակալներ .

Պետական Պլանային Հանձնաժողովի նախագահ .

Ժողովրդական կոմիսարներ՝

Մնացի արդյունաբերության .

Թեթև արդյունաբերության .

Անտառային արդյունաբերության .

Հողագործության .

Հացահատիկային ու անասնաբուծական խորհանտեսությունների .

Ֆինանսների .

Ներքին առևտրի .

Ներքին գործերի .

Արդարադատության .

Առողջապահության .

Լուսավորության .

Տեղական արդյունաբերության .

Կոմունալ տնտեսության .

Սոցիալական ապահովության .

Մթերումների կոմիտեյի լիազոր .

Արդեստի գործերի վարչության պետ.

Հնդկանուբ-միութենական ժողովրդական կոմիսարիատների
լիազորներ:

ՀՈԴՎԱԾ 84. Դաշնակից հանրապետության ժողովրդական
կոմիսարները տնօրինում են պետական կառավարման այն ճյու-
ղերը, վորոնք վերաբերում են Դաշնակից հանրապետության ի-
րավասությանը:

ՀՈԴՎԱԾ 85. Դաշնակից հանրապետության ժողովրդական
կոմիսարները համապատասխան ժողովրդական կոմիսարիատնե-
րի էրախառության սահմաններում հրատարակում են հրաման-
ներ ու հրահանգներ՝ ԽՍՀՄ-ի և Դաշնակից հանրապետության
որենքների, ԽՍՀՄ-ի ու Դաշնակից հանրապետության ժողովր-
դական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրու-
թյունների, ԽՍՀՄ-ի միութենական-հանրապետական ժողովրդա-
կան կոմիսարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա
և ի կատարումն դրանց:

ՀՈԴՎԱԾ 86. Դաշնակից հանրապետության ժողովրդական
կոմիսարիատները մինում են միութենական-հանրապետական կամ
հանրապետական :

ՀՈԴՎԱԾ 87. Միութենական-հանրապետական ժողովրդական
կոմիսարիատները տնօրինում են պետական կառավարման իրենց
հանձնարարված ճյուղը, յենթարկվելով ինչպես Դաշնակից հան-
րապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդին, այնպես
ել ԽՍՀՄ-ի համապատասխան միութենական - հանրապետական
ժողովրդական կոմիսարիատին:

ՀՈԴՎԱԾ 88. Հանրապետական ժողովրդական կոմիսարիատ-
ները տնօրինում են պետական կառավարման իրենց հանձնարար-
ված ճյուղը, յենթարկվելով անմիջականորեն Դաշնակից հանրա-
պետության ժողովրդական կոմիսարների Խորհրդին:

ԳԼՈՒԽ V

ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ

ԽՇԱԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 89. Ավտոնոմ հանրապետության պետական իշխա-
նության բարձրագույն մարմինը ԱԽՍՀ Գերագույն Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 90. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խոր-
հուրդն ընտրում են հանրապետության քաղաքացիները՝ չորս
տարի ժամանակով, ներկայացուցչության այն նորմաներով, վոր-
սահմանվում են Ավտոնոմ հանրապետության Սահմանադրու-
թյամբ:

ՀՈԴՎԱԾ 91. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խոր-
հուրդն ԱԽՍՀ միակ որենսդիր մարմինն է:

ՀՈԴՎԱԾ 92. Յուրաքանչյուր Ավտոնոմ հանրապետություն-
ունի իր Սահմանադրությունը, վորը հաշվի յէ առնում Ավտո-
նոմ հանրապետության առանձնահատկությունները և կառուց-
ված և Դաշնակից հանրապետության Սահմանադրությանը միո-
վին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 93. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խոր-
հուրդն ընտրում է Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խոր-
հուրդի նախագահություն և կազմում է Ավտոնոմ հանրապետու-
թյան ժողովրդական կոմիսարների Խորհրդի՝ համաձայն իր
Սահմանադրության:

ԳԼՈՒԽ VIII

ՊԵՏԱԿԱՆ ԽՇԱԱՆՈՒԹՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 94. Յերկրամասերում, մարզերում, ավտոնոմ մար-
զերում, ոկրուգներում, շրջաններում, քաղաքներում, գյուղե-
րում (ստանիցաներում, գյուղակներում, խուռողներում, գլագ-
ներում, առուներում) պետական իշխանության մարմիններն աշ-
խատավորների պատգամավորների Խորհուրդներն են:

ՀՈԴՎԱԾ 95. Սշաստավորների պատգամավորների յերկրա-
մասային, մարզային, ավտոնոմ մարզերի, ոկրուգային, շրջա-
նային, քաղաքային, գյուղական (ստանիցաների, գյուղակների,
խուռողների, գլագների, առուների) Խորհուրդներն ընտրում են
համապատասխան յերկրամասի, մարզի, ավտոնոմ մարզի, ոկ-
րուգի, շրջանի, քաղաքի, գյուղի աշխատավորները՝ յերկու տա-
րի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 96. Սշաստավորների պատգամավորների Խոր-

Հուրդներում ներկայացուցչության նորմաները վորոշվում են դաշնակից հանրապետությունների Սահմանադրություններով:

ՀՈԴՎԱԾ 97. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործունելությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, որենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը, իրականացնում են տեղական տնտեսական ու կուլտուրական շնորհարությունը, սահմանում են տեղական բյուջեն:

ՀՈԴՎԱԾ 98. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները վորոշումներ են ընդունում և կարգադրություններ են անում ԽՍՀՄ-ի և Դաշնակից հանրապետության որենքներով իրենց արգած իրավունքների սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 99. Աշխատավորների պատգամավորների յերկումասային, մարզային, ավանում մարզերի, ոկրուգային, ըրջանային ու քաղաքային էորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմիններն են նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեները, կազմված նախադահից, նրա տեղականներից ու անդամներից:

ՀՈԴՎԱԾ 100. Փոքր բնակավայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմինը, դաշնակից հանրապետությունների Սահմանադրությունների համաձայն, նրանց կողմից ընտրվող նախագահը և նրա տեղականներն են:

ՀՈԴՎԱԾ 101. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվուուժն ինչուս աշխատավորների պատգամավորների այն Խորհրդի առաջ, վորն ընտրել ե նրանց, այնպես ել աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհրդի գործադիր մարմնի առաջ:

ԳԼՈՒԽ 1X

ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 102. Արդարադատությունը ԽՍՀՄ-ում իրականացվում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանի, դաշնակից հանրապետությունների Գերագույն Դատարանների, յերկամասային ու

մարզային գատարանների, ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի գատարանների, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող՝ ԽՍՀՄ-ի հասուկ գատարանների և ժողովրդական գատարանների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 103. Գործերի քննարկումը բոլոր գատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, քայլի որենքով հատկապես նախատեսված դեպքերից:

ՀՈԴՎԱԾ 104. ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանը բարձրագույն գատարան մարմին և հանդիսանում է ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանի վրա դրվում և ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների բոլոր գատական մարմինների գործունելության հըսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 105. ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանը և ԽՍՀՄ-ի հատուկ գատարաններն ընտրվում են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 106. Դաշնակից հանրապետությունների Գերագույն Դատարաններն ընտրվում են գաշնակից հանրապետությունների Գերագույն Խորհրդների կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 107. Ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Դատարաններն ընտրվում են ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհրդների կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 108. Յերկամասային ու մարզային գատարանները, ավտոնոմ մարզերի գատարաններն ընտրվում են աշխատավորների պատգամավորների յերկամասային կամ մարզային վորների պատգամավորների կողմից կամ ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհրդների կողմից հիման վրա դաշտնի քվեարկությամբ—յերեք տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 109. Ժողովրդական գատարաններն ընտրվում են ըրջանի քաղաքացիները՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա դաշտնի քվեարկությամբ—յերեք տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 110. Դատավարությունը կատարվում է դաշնակից կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտոնոմ մարզի լեզվին չափանիկ չափանիկ անձանց համար ապահովելով լիակատար լեզվին չափանիկ անձանց համար ապահովելով լիակատար ծանոթացումը գործի նյութերին թարգմանի միջոցով,

ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 111. Գործերի քննությունը ԽՍՀՄ-ի բոլոր դատարաններում, յեթե որենքը բացառություններ չի նախատեսում, կատարվում ե դուրսաց, ապահովելով մեղադրյալի պաշտպանվելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 112. Դատավորներն անկախ են և միայն որենքին են յենթարկվում:

ՀՈԴՎԱԾ 113. Բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց գերատեսչությանը յենթակա հիմնարկների, առանձին պաշտոնատար անձանց, ինչպես նաև ԽՍՀՄ-ի քաղաքացիների կողմից որենքները ձչրիտ կերպով կատարելու բարձրագույն հսկողությունը դրվում ե ԽՍՀՄ-ի Դատախաղի վրա:

ՀՈԴՎԱԾ 114. ԽՍՀՄ-ի Դատախաղը նշանակվում է ԽՍՀՄ-ի Գերադառնության կողմից յոթ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 115. Հանրապետական, յերկրամասային, մարզային դատախաղները, ինչպես նաև ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի դատախաղները, նշանակվում են ԽՍՀՄ-ի Դատախաղի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 116. Շրջանային դատախաղները նշանակվում են դաշտական հանրապետությունների դատախաղների կողմից՝ ԽՍՀՄ-ի համար Դատախաղի համատափական ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 117. Դատախաղության մարմիններն իրենց Փունկցիաները կատարում են անկախ տեղական վորեւե մարմից, յենթարկելով միայն ԽՍՀՄ-ի Դատախաղին:

ԳԼՈՒԽ X

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 118. ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք — յերաշխավորված աշխատանք ստանալու իրավունք, ըստ վորում նրանց աշխատանքը պետք ե վարձատրվի նրա քանակի ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տընտեսության սոցիալիստական կազմակերպմամբ, խորհրդային հասարակության արտադրողական ուժերի անշեղ աճմամբ, տնտեսական ճգնաժամերի բացակայությամբ և զործազրկության վերացմամբ:

ՀՈԴՎԱԾ 119. ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանդստի իրավունք:

Հանդստի իրավունքն ապահովվում է բանվորների ճնշող մեծամասնության համար աշխատորը կրծատելով՝ հասցնելով՝ 7 ժամի, բանվորների ու ծառայողների համար սահմանելով տարեկան արձակուրդ, վորի ընթացքում պահպանվում ե նրանց աշխատավարձը, աշխատավորներին սպասարկելու համար սահմատորիաների, հանդստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 120. ԽՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահովության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատանակությունը կորցնելու դեպքում:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների՝ պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության ծավալամբ, ձրի բժշկական ոզնությամբ, աշխատավորների ոգտագործման համար կուրուրունների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 121. ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրությունը կրթությունը, բարձրագույն գովրցում սովորողների ճընշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սխալությով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, զործարաններում, խորհրդատեսություններում, մեքենատրակառային հայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտազրական, տեխնիկական ու ազգունութեական ուսուցում կազմակերպելով:

ՀՈԴՎԱԾ 122. Կողջը ԽՍՀՄ-ում տղամարդուն համահամար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտու-

բական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներմ:

Կանանց այդ իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովում է կնոջը աղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանդսուի, սոցիալական առաջովազրության ու կրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղիության ժամանակի արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամսուրների ու մանկապարտեզների լայն ցանցով:

ՀՈԴՎԱԾ 123. ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց աղջությունից ու ցեղից, անխախտ որենք և հանդիսանում:

Իրավունքների վորմեցե ուղղակի կամ անուղղակի սահմանափակութը, կամ ընդհակառակը, ցեղական ու պարագային պատկանելությունից յենելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ցեղական ու աղջային բացառիկության կամ ատելության ու արհամարհանքի ամեն տեսակ քարտդպաժում և որենքով:

ՀՈԴՎԱԾ 124. Քաղաքացիների համար իդմի աղատություն սովահովելու նպատակով յեկեղեցին ԽՍՀՄ-ում բաժանված և պետությունից և գլորոց՝ յեկեղեցուց: Կրոնական պաշտամունքների կատարման աղատությունը և հակակրօնական պրոպագանդայի աղատությունը ճանաչվում և բոլոր քաղաքացիների վերաբերմում:

ՀՈԴՎԱԾ 125. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար ապահովում ե.

ա) խոսքի աղատություն,

բ) մամուլի աղատություն,

գ) ժողովների ու միտինդների աղատություն,

դ) փողոցային յերթերի ու ցույցերի աղատություն:

Քաղաքացիների արե իրավունքներն ապահովում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություններին արամաղե-

լով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և աշխատավորների այդ իրավունքներն իրագործելու համար անհրաժեշտ ուրիշ նյութական պայմաններ :

ՀՈԴՎԱԾ 126. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասաների կազմակերպական ինքնագործունեցությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ապահովում է ԽՍՀՄ-ի քաղաքացիների՝ հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու իրավունքը—արհեստական միություններ, կոռպերատիվ միավորումներ, յերիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ, իսկ բանվոր գասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են ԽՍՀՄ-ի կոմունիստական կուսակցության մեջ, վորն աշխատավորների առջավոր ջոկատն և՝ սոցիալիստական կարգերն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորիգն և ներկայացնում:

ՀՈԴՎԱԾ 127. ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար ապահովումը և անձի անձեռնմխելիություն: Վոչ վոք չի կարող ձերբակալել այլ կերպ, քան դատարանի վորոշմամբ կամ դատախազի սանեցիւյունից:

ՀՈԴՎԱԾ 128. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունն ու նամակադրության զարգանիությունը պահպանիում և որենքով:

ՀՈԴՎԱԾ 129. ԽՍՀՄ-ն աղատուանի իրավունք և վերապետում ուստարերկրյաց քաղաքացիներին, վորոնք հետապնդում են գումարավորների շահերը պաշտպանելու, կամ գիտական գործունեյության, կամ աղջային-աղատադրական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 130. ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել, աղնիվ վերա-

բերմունք ունենալ դեպի հասարակական պարտքը, հարդել սո-
ցիսլիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 131. ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտա-
վոր և պահպանելու ամրագնել հանրային, սոցիալիստական սե-
փականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազն ու
անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզո-
րության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունեոր ու
կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ վատըն-
ձդություն անող անձինք ժողովրդի թշնամիներ են:

ՀՈԴՎԱԾ 132. Բնդհանուր զինվորական պարտականությունն
որենք և հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կար-
միր Բանակում ԽՍՀՄ-ի քաղաքացիների պատվավոր պարտակա-
նությունն ե:

ՀՈԴՎԱԾ 133. Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յու-
րաքանչյուր քաղաքացու սրբազն պարտաքն ե: Հայրենիքին դա-
վաճանելը—յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պե-
տության ապղմական հզորությանը միաս հասցնելը, ոտարերկ-
րյա պետության ոդախն լրահետեւթյուն անելը—պատվում են ո-
րենքի ամրող խստությամբ, վորպես ամենածանր չարագործու-
թյուն:

ԳԼՈՒԽ Հ1

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 134. Աշխատավորների պատգամավորների բոլոր
Խորհուրդների—ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի, դաշնակից հան-
րապետությանների Դերագույն Խորհուրդների, աշխատավորնե-
րի պատգամավորների յերկրամասային ու մարզային Խորհուրդ-
ների, ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդ-
ների, ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների
Խորհուրդների, աշխատավորների պատգամավորների ոկրուգա-
յին, ըջանային, քաղաքային ու զյուղական (ստանիցայի, զյու-
ղակի, խուռորի, զշաղի, առուլի) Խորհուրդների — պատգամա-
վորների ընտրությունները կատարում են ընդհա-

նուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա,
գուղանի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 135. Պատգամավորների ընտրություններն ընդհա-
նուր են. ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիները, վորոնք ընտրություն-
ների տարին դառնում են լրիվ 18 տարեկան, իրավունք ունեն
մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվե-
լու, բացի խելազարպահածներից և այն անձերից, վորոնք դատա-
րանի կողմից դատապարտված են՝ զիկվելով ընտրական իրա-
վունքներից:

ՀՈԴՎԱԾ 136. Պատգամավորների ընտրությունները հավա-
սար են. յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընտրելու և
ընտրվելու, անկախ ցեղական ու ազգային պատկանելությունից,
գալանանքից, կրթական ցենդից, նստակեցությունից, սոցիալա-
կան ծառաւմից, զույքային դրությունից և անցյալ գործունե-
յությունից:

ՀՈԴՎԱԾ 137. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից
ողովում են տղամարդկանց հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 138. Կարմիր բանակի շարքերում զանվոր քաղաքա-
ցիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ողովում են բոլոր
քաղաքացիների հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 139. Պատգամավորների ընտրություններն ուղղա-
կի յեն. աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդ-
ների ընտրությունները, սկսած աշխատավորների պատգամա-
վորների գուղական ու քաղաքային Խորհրդից մինչև ԽՍՀՄ-ի
Գերագույն Խորհրդը, քաղաքացիները կատարում են անմիջա-
կանորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 140. Պատգամավորների ընտրության ժամանակ
քեւարկությունը գաղտնի յէ:

ՀՈԴՎԱԾ 141. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն
առաջադրվում են ըստ ընտրական ըբջանների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշ-
խատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկե-
րությունների — կոմունիստական կուսակցական կազմակերպու-
թյունների, արհեստական միությունների, կոոպերատիվի-

րի, յերիտասարդության կաղմակերպությունների, կուլտուրա-
կան ընկերությունների համար:

ՀՈԴՎԱԾ 142. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր ե
լնորողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավոր-
ների պատղամավորների Խորհրդի աշխատանքի մասին և կարող
ե ամեն ժամանակ հետ կանչվել ընտրողների մեծամասնութան
վորոշմամբ, որինքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XII

ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 143. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միության պետական գերբը բաղկացած ե մանգաղից
ու մուրճից՝ յերկրագնդի վրա, վորը պատկերված ե արևակի
ճառագայթների մէջ ու շրջապատված հասկերով և կրում ե գաշ-
նակից հանրապետությունների լեզուներով՝ գրված «Պրոլետար-
ներ բոլոր յերկիրների, միացե՛ք» մակագրությունը։ Գերբի վե-
րևում կա հնդաթե աստղ։

ՀՈԴՎԱԾ 144. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միության պետական դրոշակը բաղկացած ե կարմիր
կառրից, վորի վերին անկյունում՝ կոթի մոտ նկարված են վոս-
կեհուռ մանգաղ ու մուրճ և նրանց վերեւում հնդաթե կարմիր
աստղ, շրջապատված վոսկեհուռ յերիզով։ Լայնության և յեր-
կարության հարաբերությունն ե՝ 1 : 2։

ՀՈԴՎԱԾ 145. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միության մայրաքաղաքը Մոսկվա քաղաքն ե։

ԳԼՈՒԽ XIII

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԴԸ

ՀՈԴՎԱԾ 146. ԽՍՀՄ-ի Սահմանադրության փոփոխումը կա-
տարվում ե միայն ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի վորոշմամբ,
ընդունված նրա պալատներից յուրաքանչյուրի ձայների առնվազն
յերկու յերրորդի մեծամասնությամբ։



ՀՀ Ազգային գրադարան



NL0207782

478

ԳԻՒԾ 30 Կ.

34.530

